FINCA®

Հաճախորդների խորհրդատուներ «Վանաձոր», «Աշտարակ», «Քաջարան» մասնաճյուղերում

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- Ներկայացնել և վաճառել ընկերության ֆինանսական ծառայությունները՝ բացահայտելով հաճախորդների կարիքները և առաջարկելով համապատասխան վարկատեսակները,
- Աջակցել հաճախորդներին՝ լրացնելու ցանկացած տեսակի դիմումներ,
- Հաճախորդներին տրամադրել իրենց հետվճարների վերաբերյալ տեղեկություններ՝ ներքին կանոնակարգին համապատասխան,
- Նոր այցելուների մեջ հայտնաբերել պոտենցիալ հաճախորդներ, պահպանել առկա հաճախորդներին՝ ստեղծելով բարյացակամ փոխհարաբերություններ և ապահովելով հաճախորդների գոհունակության բարձր մակարդակ,
- Կատարել հաճախորդների տվյալների մուտքագրում տվյալների համակարգ և հարցումներ՝ անհրաժեշտության դեպքում,
- Ծրագրով հաստատել տրամադրվող վարկերը (իր իրավասության սահմաններում),
- Հաճախորդներին ներկայացնել և բացատրել պայմանագրի բոլոր դրույթները, պահպանել և արխիվացնել բոլոր փաստաթղթերը,
- Անհրաժեշտության դեպքում աջակցել ադմինիստրատիվ հարցերում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

- Բարձրագույն կրթություն, նախընտրելի է տնտեսագիտական, ֆինանսական, մաթեմատիկական,
- Վաճառքի գործիքների իմացությունը և կիրառման փորձը ցանկալի է,
- Հաճախորդների սպասարկման գերազանց հմտություններ,
- Շփման և բանակցելու զարգացած հմտություններ,
- Նվիրվածություն աշխատանքին և ուշադրություն մանրուքներին,
- Սեղմ ժամկետներում և գաղտնի տեղեկատվության հետ աշխատելու ունակություն,
- MS Word և MS Excel ծրագրերի լավ իմացություն, Հայկական ծրագրերի (ՀԾ) իմացությունը ցանկալի է,
- Հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և/կամ անգլերենի լավ իմացությունը ցանկալի է:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ՝

Եթե հետաքրքրված եք թափուր աշխատատեղով և Ձեր տվյալները համապատասխանում են պաշտոնի պահանջներին, խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ hr@finca.am՝ էլ. նամակի վերնագրում լրացնելով՝ **«Հաճախորդների խորհրդատու – մասնաճյուղը – Անուն Ազգանունը»**:

**Ընտրված թեկնածուները կապահովվեն անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով՝ դասընթացների և գործնական աշխատանքի միջոցով:*

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ Մայիսի 20, 2018